ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» մարտի 2025 թվականի N 366-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 03-Ի N 214-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման մշտական հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 17-ի նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման մշտական հանձնաժողով ստեղծելու,նրա գործառույթները սահմանելու, առաջարկների ներկայացման հայտի և նախնական գնահատման աղյուսակի ձևաթղթերը սահմանելու մասին» 214-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման Հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ

Ս. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

2025թ.
ք. Գյումրի

Հավելված
ՀՀ ՇՄ Գյումրի համայնքի ղեկավարի
«14» փետրվարի 2025 թվականի
N 366 որոշման

«Գյումրի համայնքի ղեկավարի
«03» փետրվարի 2025 թվականի
N 214-Ա որոշման»

ՊԼԱՆ - ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Մասնակցային բյուջետավորման իրականացման փուլ	Միջոցառում (նկարագրել իրականացվելիք գործողությունները)	Պատասխանատու եվ կատարողներ	Աջակցող թիմակիցներ	ժամկետներ
1	Նախապատրաստական փուլ	Համապատասխան փաստաթղթերի կազմում և հաստատում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման մշտական հանձնաժողովի նսիտի հրավիրում	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի քարտուղար, մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի նախագահ		03.02.2025թ.-05.02.2025թ.
2	Իրազեկման փուլ	Գյումրի համայնքի 2024 թվականի մասնակցային բյուջետավորման նախագծի հայտերի,ձևաչափերի,ծրագրերի և դրանց հիմնավորումների ներկայացում, հրապարակում, հանրային իրազեկումներ՝տեղեկատվություն նախատեսվող գործընթացների, միջոցառումների, թիրախային ոլորտների/ծրագրերի, շահառուների, ժամկետների, վայրերի,հանրության, մասնակցության ձևերի, ինչպես նաև կոնտակտային անձանց և միջոցների վերաբերյալ:	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով	ՀԿ կենտրոն, Կոմպաս ՀԿ	05.02.2025թ.-10.02.2025թ.
3	Առաջարկների ներկայացման փուլ	Քաղաքացիների կողմից առաջարկ-ծրագրերի ներկայացում	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի քարտուղար		10.02.2025թ. 03.03.2025թ.
4	Առաջարկների նախնական	Հայտերի՝առաջարկ-ծրագրերի հավաքագրում,	Մասնակցային բյուջետավորման		03.03.2025թ.-

	գնահատման փուլ	ամփոփում,առաջարկների ցանկի կազմում, նախնական գնահատում՝ յուրաքանչյուր առաջարկի համապատասխանությունը սահմանված չափանիշներին:	կառավարման հանձնաժողով		06.03.2025թ.
5	***Հանրային քննարկումների և լսումների փուլ***	Սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկների ներկայացումը հանրությանը հանրային լսումների ու քննարկումների միջոցով	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով		07.03.2025թ.-11.03.2025թ.
6	***Քվեարկության փուլ***	Սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկ-նախագծերի հանրային քննարկումներ: Քվեարկության փուլ անցած առաջարկների վերբեռնում համայնքապետարանի պաշտոնական կայքում/բաժնում՝ քվեարկության համար: Համայնքի ղեկավարի կողմից առաջարկների հասանելիության և քվեարկելու իրավասության ապահովում միայն համայնքի բնակիչների կողմից :	Համայնքապետարանի ցանցային ադմինիստրատոր	«Տեղեկատվական համակարգերի զարգացման եվ վերապատրաստման կենտրոն» ՀԿ	12.03.2025թ.-31.03.2025թ.
7	***Իրականացման փուլ***	Հանձնաժողովի կողմից ընտրված առաջարկի մշակում և սուբվենցիոն հայտի ներկայացում: Ֆինանսատնտեսագիտական բաժնի կողմից աշխատանքների իրականացման համար գնման ընթացակարգերի իրականացում՝	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով, Ֆինանսատնտեսագիտական բաժին		05.04.2025թ., Հայտի հաստատումից մինչև 20.12.2025թ.
8	***Հաշվետվության փուլ***	Մասնակցային բյուջետավորման գործընթացի մասին հանձաժողովի կողմից հաշվետվության ներկայացում համայնքի ղեկավարին, որն իր մեջ պետք է ընդգրկի հաշվետվություն իրազեկման արշավի մասին,առաջարկների ներկայացման և նախնական ընտրության մասին, քվեարկության արդյունքների մասին,առաջարկի իրականացման մասին:	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի նախագահ		30.12.2025թ.